

» 1892 «

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

ՀԱՏՈՐ Ա

ԱՊՐԻԼ

ՀԱՅ-ՀԱՅՆԵՑ

Դ

(ՏԵՂ ՀԷՀ 10)



ԱՅԱՑ երթեւեկն թէ այս և թէ որիշ խտալից քաղաքները՝ ի միջին և վերջին եւս զարս, զիսաւոր երկու բանի համար էր. վանասականութեան և կրօնից. այս եռթինիս վկայ են շատ անդամ յիշեալ իրենց հոգեառնը կամ վանասաւունը և եկեղեցից յայլեալը քաղաքս, ո՞ր և է պատճառաւ եկած և բնակած ալ ըլլան։ Ռմանց դիսումն պարզապէս բարեպաշտական եղած է, ուխտաւորութեամբ, այսինքն սրբազն և ուխտի տեղեաց զալ աեւնել, ազօթել, զիսաւոր ուխտատեղին յայտ է թէ ի Հռովմ էր, Ս. Առարելապետաց եկեղեցիքն։ Ուստից հետ զգոն կամ հետաքնին անձինք կը միացընէին աշխարհաստեսութեան փափազն ալ. այս ալ յատուկ բնաւորութին մ'էր և պէտք էր ըլլալ մեր ազգայնոց, որ ի մէջ ազգաց թէ ոչ առաջին աշխարհաշղիկ կամ աշխարհաքաղաքացի կրնան ըսուիլ, այլ ոչ և երկրորդ։ Այս երկու զիսմանքն յօրդորեր է բարձր Հայոց արգելն ուխտաշատ նզրնկայ գաւառին մէկ ուխտատեղւոյ առաջնարդ եսփիսկոպոսը, Մարտիրոս, երկար ժամանակ և երկար ճամրորդութիւն ընել յիշուպա, 1494-7 տարիներու միջոց։

Այս թուականներէն շատ տարիներ առաջ (թերեւս 25 կամ 30), կը յիշուի նա նոյնպէս եպիսկոպոս կոչմամբ և «Սպասաւոր Ս. Լուսաւորչին Ս. Գերեզ-

մանին»։ Երբ այն կողմերը ասպատակեց ձիհան շահ Սեւախոյ թուրքմանաց իշխողն (զոր յետոյ սպաննեց Ռէգուն Հասան և միապետց), կողապելով ու գերելով զիերջան, զատ յայլոց՝ Աւմիրիսէր անուամբ մէկու մ'ալ երկու դատերքը գերի ըրաւ իր հեծելոց։ այս խեղճ հօր զթալով Եզզնկայ վանորէից առաջնորդը և եպիսկոպոսը վկայական դիր տուին, որ շրջի ողորմութիւն ժաղացելով և փրկանք տալու զաւակացը։ այս վկայագրաց մէկն ալ էր Մարտիրոս, որ գուցէ այն ատենէն կը փափագէր յաջողագոյն զիտմամբ ճամբրություն։ և կը կատարէ փափագը՝ վայելչապէս։ ըսել կ'ուգեմ՝ լաւ և սույգ զիտողութեամբ, և ոչ շափազանցօքն կամ ի հարմանցի, ինչպէս ոմանք ըրած են, և ՚ի մասնաօրի զվենետիկ տեսողք և զրողք, որոյ եկեղեցեաց և կամրջաց բազմութեան վրայ զարմացած՝ քանի մի հազար կ'ըսեն փոխանակ հարիւրոց, նոյնպէս ալ եկեղեցեաց կանթեղաց և սպասուց։

Լսենք ինչ կ'ըսէ կամ կը գիւ։ «Ես Մարտիրոս, միայն անուամբ Ես» պիսկոպոս Երզնկացի, ի Ս. կիրակոսու յանապատէն, ի Նորգիւղա գեւ «զէն, ի վաղուց հետէ փափագէի ի Ս. պիտառը Առաքելոցն Գերեզմանին » տեսանելցյ. և յոթամ հասեալ ինձ անարժանս արժանաւորել տեսլեան » նոցա, և հանապազ սիրաս փափագէր, բայց ոմեք ոչ կարէի յայանել ըզ-» խորհուրդ սրտի իմում։ Թվին թշշէլ (1490) հոկտ. իթ, յելայ ես իմ » վանացն, և եկայ մեղաբար հասի ի յ՛Ստամպոլ. և Աստուծոյ յաջողու-» թեամբ գոտեալ նաւ մի և մտի անդ, Վրթանէս սարկաւագով։ Թվլ. Զիթ » (1491) յուշի ԺԱ ի յ՛Ստամպոլու ելաց, մտաք ի նաւ մի ֆրանզի. և » հոկտ. Ա. ելաք ի վենէժ քաղաքն, որ է վենետիկ. մեծ և փառաւոր » քաղաք. և ինքն է ի մէջ ծոլու շինած. Հիթ (74,000) առն է. և խիսա » փառաւոր և հարուստ քաղաք է. և մեծ եկեղեցի կայ ի մէջ քաղաքին, որ » Ժթ. (40,000) մարդ կու մանէ ի մէջն, խիստ զարդարած է ոսկով. Ս. » Մարիոս յաւետարանչին եկեղեցին է. և երկու երգեհոն կայ ի մէջն և » երկու թեւաւոր առիւծ է շինած ի մէջն. և այլ շատ եկեղեցիք կայ ի » քաղաքն, շատ վանորայք կայ ի բոլոր քաղաքին. ամէն մէջ ծով է շինած։ » Եւ մեծ մաշիտան (մէյտան, հրապարակ) մի կայ առաջեւ եկեղեցին Ս. » Մարիոսի. ի զրանն շատ ի վեր շորս գեղին պղնձէ ձի մի շինած և կանգ-» նեցուցած մեծ մեծ, և զմէկ սուբին ի վեր են կայեալ⁽¹⁾։ Եւ ի հարա-» ւային կողմ ծոլու զեհն՝ հանց ծախողներն է (փոքր հրապարակին մէջ)։ » և երկու մեծ սիւն է կանգնեցուցած. մէկին վրայ թեւաւոր առիւծ մի, » մէկալին Ս. Գէորգ է կանգնել է (լստ այլոց Ս. Թէովորոս)։ Եւ թագա-» ւորին զարպասին պարխոսն ամէնն յոսկուլ զարդարած։ Եւ այլ ազգի ազ-» գի շատ բաներ. ո՞վ կարէ պատմել զքաղաքին զալէկութիւն. Եւ կեցար իթ » (29) օր։ Եւ մոնաք ի նաւն, և գնացաք ի ԺԳ (13) օրն յԱնգոնիայ. և

1. Ըստ աւանդութեան Տիրիթ կամ Տրդատ Թագաւոր Հայոց բերած էր այս ձիանքն ի Հռովմ. Տես Բաղմ. Խթ.։

« անտի հասար ի լի (8) օրն աստուածապահ մեծն ի Հռոմ» , և այլն ։ Զորս տարի ալ թէ ծովով թէ ցամաքով Եկոսպիոյ ամէն կողմերը և Ափրիկէի եղբարքն ալ պտըտելով՝ նորէն կը դառնայ ի Հռովմ , և զարձեալ ի նաև մըս նելով՝ կ'աւարտէ գրուածը , յայտ է թէ ոչ և իր բազմաշրջիկ և հետաքննական ընթացքը :

Ե. Նշանելի է որ Մարտիրոս չի յիշեր ի Վենետիկ՝ Հայոց տունը և եկեղեցին . առաջինն աւելի պանդիխտաց և աղքատաց համար ըլլալով՝ հաւանորէն հնդն հօն չէր իջեւանած . իսկ երկրորդն ալ՝ ինչպէս առաջ յիշեցինք , հազիւ թէ մատրան նմանութիւն մ'ունէր այն ատեն , և յիշուելու արժէք չունէր : Բայց զրեթէ Մարտիրոսի եկած տարին կամ աւելի առաջ Հայոց տան մէջ բնակող ազգային քահանայ մի կար Գրիգոր անուամբ , ուրու իր հայրենիքը դառնալու առթիւ՝ Հայոց տան վերատեսուչ տէրութեան Հոգարարձուք՝ շրոս կրու թոշակ տուեր են (1) իբրև ողորմութիւն (24 օգոստ . 1490) : Եղյանակս ալ ըստած են անշոշառ ուրիշներու , ինչպէս երկրորդ տարին (1491) Ռոմեր (այլայսած անուամբ Romerio) ազգատի մի Յ կը րու տուեր են . քանի մի տարի վերջը (1498, օգոստ 9) Յովանի անուամբ Հայու մ'ալ իր երկիրը դառնալու ատեն 2 կրոս : — Ոչ միայն այս անձանց յիշատակը կը յայտնեն՝ Հայոց երբեմն աւելի երբեմն պակաս թնուլ , բայց զրեթէ միշտ գոտիկն իրենց կրտակած տան մէջ , այլ և այդ տան քիչ շատ նորոգութիւն , կամ մանր չենք ու կարկասանք , որք 50 տարիներուն միջոց (1443—94) 15 կամ 20 անգամ նշանակուած են առանձին հաշուէքրոց մէջ , ամէն անզամ եղած ծախուց թիւերով . հարկ է որ անկէ առաջ երկու զարուց միջոց ալ նոյնային ծափեր և շէնքեր եղած են , այլ հաշուէքրոքն կորած են : — Ծախուց ստակն կամ զրամապղուին Ծիւնեայ թողած գումար մ'էր (տ. Բազմ: ԽԲ) , որ կէսն Հայոց համար , կէսն . ալ Փրանչիսկեան կրտաւարաց Վենետիկոյ Այսի կոշուած թաղին մէջ (alla Vigna) . երիտքին ալ մատակարար կամ կրտակակատրը էին քաղքին ներբին երեք Հոգառդքն (Procuratori de Citra) , որ և պետութեան ամենէն մեծ պաշտօնէից կարգէն են , և ամենայն հաւատարմութեամբ կատարած են Ծիւնեայ իրենց յանձնած հոգք՝ Հայոց տան համար : Զամ երբեմն Ցուն կ'անուանեն և կը զրեն , երբեմն Հիշրատուն կամ Հոգենուն , իրենց լեզուով (Hospizio, Hospital կամ Domus Armenorum կամ De Armenis, Os-pidal di Arminij.) տան մօտ եղած կամուրջն ալ՝ կամուրջ Հայոց (Pons Armenorum որ և Pons Feralis)

Աւելի իբրձմանաթեամբ միանգամայն և ապահովութեամբ հոգալու համար իրենց կողմէն զործակալ և պահապան մի կարգէին ի Ցանն , զոր սովորա-

1. *Dedimus Presbitero Gregorio Armeno ituro domum suam, pro sua subventione, amore Dei, Grossos 4.* Եթէ չեմ սխալիք՝ այս կրոն այն ատեն ուկի գուեատի կէսն էր , որով ըստ նիւթոյն կ'արժէր իրը 6 ֆրանդ . ըստ յարդի՝ շատ աւելի :

բար Տնապահ կոչեն Castaldus, Castaldionus, բայց երբեմն ալ Prior կամ Proto, իբրեւ զիխաւոր կամ առաջնորդ, յետոյ երբեմն Պահապան, Custode, Guardiano, Vardian. ինչուան ժաշ զարուն կէս միշտ իսալացիք՝ այսինքն բնիկ վեճնետք եղած են Տնապահն. անմէտ ետեւ ինչպէս որ կը վայլէր, երբեմն Հայ երբեմն իսալացի, մինչև մօա ի վերջ Ժէ զարու և ի նոր շինուաթիւն Այ. Խաչ եկեղեցւոյ, ուսկից վերջը բղողովին Հայոց ձեռք անցաւ թէ տան թէ եկեղեցւոյ նորը և շնչըր. պետութեան երեք հոգցողքն միակ ծանրը ինդրոց կամ վիճից մէջ՝ իրենց հեղինակութիւնը կը բանեցընէին. երբեմն իրենց և Հայոց մէջ ալ վէճ եղած է, որ մերոց կողմանէ մեծ յանդընութեան փորձ է: 1476 թուականէն մինչեւ ի կէ Ժէ զարու, 25 Տինապահից անուանք յայսնուած են, որը յիշել աւելորդ համարիմ, բայց եթէ գէպը պահանջնեն, միայն զՀայոց յիշեմ, որչափ որ ծանօթ են՝ իրենց ժամանակովն ալ.

Աղեքսանդր	1508
Սիմոն	1555-1577
Գէորգ որդի Յովհաննու	1577-588
Մկրտիչ Պարսկահայ	1595-1608
Ղազար Պարսկահայ	1617
Գէորգ Գորիլոյ	1643-50
Գետրոս Ռոկան	1650-58

Ճամանակադրական կարգ իրաց զասոնք կը ներկայացընէ ի հարկին: — իսկ հիմայ Ժէ զարուն վերջի տարիներուն (1493-6) նոր շարժմանք մի կ'երեւի Հայոց ի վեճնետքի. եկող գացողներն կ'աւելնան. որոց համար հարկ կ'ըլլայ Հոգաբարձուաց՝ այն մանր նորոգութիւններու տեղ բարորովին նորոգել կամ վերաշինել Հայոց տունը (¹) որոց համար բաւական ծախք ըրին, իրենց գործակալ Գասպար Ամադի (Gasparo Amadi) Տնապահն ձեռօք: Վեճնետաց հոչակաւոր և ծիրանաւոր (կարտինալ) Պեմպոյ պատմին գեղեցիկ գրաւածէն ալ կ'երեւի, որ այն օրերը քանի մի նշանաւոր և խօսքի տէր Հայը եկած էին, և գտնելով կամ զիտնալով Ժդ զարու մէջ իրենց ծեր ազգացին թողած կտակը և ստակը՝ Հայոց տան և եկեղեցւոյ մի շինուաթեան համար, ասիսկեցին զՀոգաբարձուաց՝ որ տունը բնակութեան, և Հայոց բնակութեան՝ պատշաճ վիճակի մէջ գնեն. անոնք ալ կամարեցին իրնոցիրը. բայց կ'երեւի թէ Հայը իրենց քմանց համեմատ այս կամ այն կիրապով շինուածը ալ ուղէին. որոց համար աւելի եղած ծախքն ալ խոստացան և քիչ քիչ վճարեցին. և երբ ամեն բան յարմարեցաւ, մոտան Հայը իրենց

¹ Pro fabricio fienda in Domo de nova fabricando, կը դրէն ի հաշուեգիրը, ի 23 սեպտեմբ. 1494:

սեփականեալ սունը, յամի 1497. որոց համար այսպէս կ'ըսէ պատմիշ և քերզող հեղինակն այն (Պէմպոյ)։ «Հայք, այդ հեռաւոր ժաղղովորովն՝ քաղաքավարութեամբ ընդունուած (ի վեճմասայ), բարեկամական» տեսարան մ'ընծայեցին քաղքին » (1)։ — Փափագելի էր այս Հայոց » տան բնակութեան նորոգողաց կամ նոր եկողաց անոււանց և որպիսութեան վրայ աւելի ծանօթութիւն ունենալ, և մեծ պատմին վիայութիւնն աւելի բացարել, բայց դուծ աեղեկութիւնիս այշափէ է։ Այն ատեն եկող գացող Հայոց միայն մէկու մի յիշապակ կայ 1495—96 տարւոց հոկտեմբեր ամսու 5ին. որոյ անունն ալ կամ սիալ կամ իտալացեալ գրուած է, (Սոն Donado Armeno sudito del Signor Turco) Տունառոյ, թուր թէ ուոչր բարզութեամբ անուն մ'էր (Տիրասուր, Խաչատուր, Ասուածատուր, ևն)։ Ազրիական ծովու մէջ նաւելու ատեն, Ազանիայի Տուշինիոյ քաղքին վենետիկեցի ծովապեան՝ կեցուց նաւը և քննեց. և այս թուրքաց հպատակ Հայուն ապրանքը, որ կամ գիտափէ, կամ չուխայ էին (Պառո), փախրատեայ համարելով, նաւովը հանգերձ խաւրեց ի վենետիկ. ուր Հայն արդարացուց վիճուր, ասրանաց մէկ մասը սոյն այս քաղքիս մէջ գնած ըլլալով, մէկ մասըն ալ թեղարոյ քաղաքին տօնալվածառէն գներ էր։ Շահասէր և ճարպիկ Հայու աշքէն ոչ միայն մեծ շահաստանն վենետիկ, այլ իտալիոյ որ և է շահու և առեւտրի բանուկ նաւահանգիստ կամ հրապարակ՝ չէր ծածկուեր։

Ը. Ժ. Ժարուն սկիզբը նոր շարժում մ'եղաւ քաղաքական կամ վարչական, մեր և դրացի աշխարհաց մէջ, որ նորէն դրեց վենետիկոյ հասարակապետութիւնը՝ զիսելու քննելու և սասուցելու եղածը կամ ըլլալիքը. ինչ որ ըրա Ռւլուն Հասանի տիրապետութեան ատեն, նոյնը և Շահ իտամայէի երեւալուն, որ զբէթէ իր (մօր կողմանէ) պապուն պէս, և գուցէ աւելի քաղաքապիտութեամբ և զինուրական կրթութեամբ՝ բարեկարգ և տեսող աւրութիւն մի հաստատեց, որ կոչեցան Շահ-Սէֆեանց Պարսից թագաւորութիւն, իբրեւ երկու գար նոյն ցեղի յաջորդութեամբ։ Իսմայէլ ի մանկութեան մեծ վտանգի մէջ ընկած և գրեթէ Հայոց ձեռքով կամ անսնց ամուս պապատանով մի (Աղթամար կղզոյ) ապրած է. և ինչպէս կ'աւանդէ իտալացի ժամանակակից ճամբարդ մի, հօն երեք Հայ վարդապետաց խնամօք գաստիարակուած, թէ երախտապարտ և թէ ծանօթ էր Հայոց. ուստի, երբ յաջորդեցաւ Հասանայ որդոց և թոռանց բաժանեալ տէրութիւնը ձեռք ձգել (1499) և միացընելով զօրանալ, և ընդգէմ Օսմանեանց շարժիլ, վենետիքին աշուրնին և ականչնին. իբրեւ պաշտօնէին և վաճառականաց միջոցով լուր առնուկ բաւական չեղաւ, հարցուցին և Հայոց, թէ ի վենետիկ եկողաց և թէ ուրիշ կողմեր գտնուողաց, մանաւանդ ի կիպրոս, ուր կը

1. Fu da' Procuratori la Casa agli Armeni renduta, e ad abitare incominciata; ed essi cortesemente e liberalmente ricevuti, amichevole spettacolo alla Città diedero. — Bembo LIB. IV.

յաճախէին Հայք, ինչպէս վերը յիշեցինք : Ասոնց մէկն Մուրատ Ալճիշ-բացի՝ Դաւրիժէն գալով հօն (ի 26 օգոստ, 1503) պատմեց այն քաղքին քոլ Հասանայ Մուրատիսան թռոան և Խսմայելի մեծ պատերազմը, ուր երկու կողմէն 60 կամ 70,000 մարդ ջարդուեցան, յաղթող եղաւ Մուրատիսան՝ վրացի գնդի մ'օգնութեամբ . բայց յետոյ բազկն յաջողեց Խսմայելի : Խսկ մեր Անփիւացի Մուրատիս պատմեց ալ որ յԱմիկ հանվագեցաւ Ուղուն Հասանայ մէկ աղջկան, որ քրիստոնեայ էր և յԵրուսաղէմ յոխտ կ'երթար 500 ընկերոր, և մէկանեղ եկան ինչուան ի Հալէպ :

Յաջորդ տարին (1504) յունիս ամսոյ մէջ քանի մի Հայք ի Վենետիկ գալով հարցուեցան և պատմեցին, թէ եօթն ամիս է որ Շահ Խսմայէլ յաղթեց և Մուրատիսինի տիրած երկիրները նուաճեց, յանուանէ յիշելով Դաւրիժ, Սուլտանիս, Շրաւան, Խորասան, և այլն. և վերջերը կը պաշարէր կամ մօտեցեր էր Resugella կոչուած բերդին, որ եթէ արգելք չըլլար իր արշաւանացը՝ ինչուան հիմայ ի Հայաստան ալ մօտած կ'ըլլար : — Տասն տարի վերջը Դաշիք եպիսկոպոս կիպրոսի կը զրէ (23 մարտի, 1515) երբեմն ի կիպրոս խորհրդական եղաղ Դոնատոյ Լեզէ (Donato Leze կամ Leg'e) ազնուականի ի Վենետիկ, ուր իր (Դաւրիժ) եղբայրն ալ գտուեր, Շահ Խսմայելի և Սուլտան Սէլիմի պատերազմը խոյ քաղքին մօտերը, կամ ի Զալտըրան, ուր առաջինն յաղթուեցաւ, հրազդնք չունենալուն համար : Երկրորդ թղթով մի (25 ապրիլի) Դաշիք կ'իմացընէ նոյն բարեկամին, որ Խսմայելի իշխանութեան երկրէն Chichincagia? (Չմշկածանդ), տեղէ կամ քաղքէ՝ Հայ եպիսկոպոս մ'եկաւ իրեն քոլ երկու ամիս կեցաւ (ի կիպրոս), և շատ սեղեկութիւններ տուաւ Սուլտան Սէլիմի արշաւանաց վրայօր . որ թէ և հետաքրքրական են, այլ մեր նպատակէն գուրս են . և այն արինահեղ պատերազմներէն (որ քանի մի հարիւր հազար մարդ ծածկեցին մեր հայրենի հողոց մէջ), անտարակոյս փափազելի են խաղաղական յիշատակներն անկէ պանդիստածներուն՝ այս Ազրիականի ապահով ծոցուն մէջ :

Շարայարելի